ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հուլիսի 17-ից 19-ը
Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Ստեփանյան – Արտաքին տնտեսական գործունեության սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների կազմակերպման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

Ինգա Պողոսյան - Միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, հուլիսի 17-ից 19-ը

3. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի (այսուհետ՝ Ղեկավարների խորհուրդ) 79-րդ նիստի նախապատրաստական աշխատանքների հետ կապված փորձագետների հանդիպում:

5. Քննարկված թեմաները՝

Ղեկավարների խորհրդի փորձագետների հանդիպման ընթացքում քննարկվել և համաձայնեցվել են որոշումների նախագծերը ավելի քան 17 հարցերի շուրջ, այդ թվում նաև՝ ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային մարմինների միջև տարանցիկ փոխադրումների պարզեցման, մաքսային մարմինների կողմից տրանսպորտային և առևտրային փաստաթղթերը կնիքելու և դրոշմակնիքելու կարգի, մաքսային նպատակներով ԱՊՀ մասնակից պետությունների փորձագիտական և

հետազոտությունների կենտրոնի, մաքսային ծառայությունների համար կադրերի պատրաստման և վերապատրաստման, ապրանքների ծագման և դասակարգման հարցերով աշխատանքային խումբ ստեղծելու, ռիսկերի կառավարման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների միջև փոխգործակցության վերաբերյալ հարցեր և այլն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպման ժամանակ քննարկվել են ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային մարմինների միջև տարանցիկ փոխադրումների պարզեցման շուրջ փոխգործակցության հուշագրի և մաքսային նպատակներով ԱՊՀ մասնակից պետությունների փորձագիտական և հետազոտությունների կենտրոնի մասին համաձայնագրի ներպետական ընթացակարգերի և դրանց ընթացքի վերաբերյալ հարցեր, տեղի են ունեցել մաքսային ծառայությունների համար կադրերի պատրաստման և վերապատրաստման մասին համաձայնագրի՝ հնարավորինս սեղմ ժամկետում ստորագրման շուրջ քննարկումներ, ինչպես նաև ապրանքների ծագման և դասակարգման հարցերով աշխատանքային խումբ ստեղծելու նպատակահարմարության շուրջ հարցերի, ռիսկերի կառավարման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների միջև փոխգործակցության վերաբերյալ հուշագրի նպատակահարմարության վերաբերյալ հարցերի քննարկումներ և այլն:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման վերջում ստորագրվել է ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 79-րդ նիստի նախապատրաստական աշխատանքների հետ կապված փորձագետների հանդիպման արձանագրությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ ԱՊՀ անդամ պետությունների միջև ավելի սերտ համագործակցության և մաքսային ոլորտում աշխատանքների ակտիվացման վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Ս. Ստեփանյան

Ի. Պողոսյան

24.07.2024թ.